ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Արաբական Միացյալ Էմիրությունների Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ցանկանալով հաստատել ավելի սերտ համագործակցություն զբոսաշրջության բնագավառում եւ կարեւորելով զբոսաշրջությունը որպես Կողմերի պատմությունը, մշակութային ժառանգությունը, ժողովուրդների ապրելակերպը ճանաչելու արդյունավետ միջոց եւ որպես ժողովուրդների միջեւ բարի կամքի դրսեւորման ձեւ,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրով նախատեսվող համագործակցությունը կիրականացվի մասնավորապես հետեւյալ ուղղություններով.

- զբոսաշրջության երկկողմ զարգացում՝ ակտիվացնելով երկկողմ կապերը մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջեւ.
- երկու երկրների զբոսաշրջության ոլորտում մասնագիտացած ընկերությունների միջեւ կապերի ստեղծում.
- երկու երկրների զբոսաշրջության զարգացման գործընթացին երիտասարդության մասնակցություն, ներառյալ երիտասարդության եւ մասնավոր փոխայցելությունները.
- զբոսաշրջության ոլորտում ներդրումային քաղաքականության աջակցություն.
- տեղեկատվության փոխանակում, այդ թվում՝ զբոսաշրջության վերաբերյալ օրենսդրության, վիճակագրության եւ շուկայագիտության.

Հոդված 2

Կողմերը, զբոսաշրջային կազմակերպությունների միջեւ համագործակցություն սկսելու եւ զարգացնելու նպատակով, իրենց պետական իրավասու մարմինների միջոցով կաջակցեն զբոսաշրջային կազմակերպություններին, որոնք իրականացնում են ներդրումային ծրագրեր, ինչպես նաեւ կազմակերպում են համատեղ աշխատանքներ՝ ուղղված զբոսաշրջության ոլորտում ծառայությունների տրամադրմանը:

Հոդված 3

Կողմերը կուսումնասիրեն զբոսաշրջության զարգացման համար երկու երկրներում առկա ներուժը, մասնավորապես հյուրանոցային շինարարության, շուկայագիտության եւ այլ բնագավառներում: Կողմերը, իրենց օրենսդրությանը համապատասխան, կնպաստեն այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

Հոդված 4

Կողմերը, իրենց օրենսդրությանը համապատասխան, կձգտեն դյուրացնել երկու երկրների միջեւ զբոսաշրջային փոխայցելությունների ընթացակարգերը:

Հոդված 5

Կողմերը կփոխանակեն մասնագիտական խմբեր, որոնք կմասնակցեն մարզական, երաժշտական, թատերական միջոցառումներին եւ ազգային փառատոներին, ինչպես նաեւ զբոսաշրջության ոլորտին վերաբերող ցուցահանդեսներին, համաժողովներին եւ խորհրդաժողովներին:

Հոդված 6

Կողմերը միմյանց կօժանդակեն եւ կաջակցեն երկու երկրների միջեւ զբոսաշրջության խնդիրներին առնչվող տեղեկատվության փոխանակմանը մասնավորապես՝
- զբոսաշրջության ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերի վերաբերյալ.
- երկրի զբոսաշրջային ռեսուրսներ վերաբերյալ.
- տեղեկատվական եւ գովազդային նյութերի վերաբերյալ:

Հոդված 7

Կողմերը կօժանդակեն միմյանց զբոսաշրջության ոլորտի մասնագետների պատրաստման հարցում, կաջակցեն զբոսաշրջության ոլորտում մասնագիտացած գիտնականների, մասնագետների եւ լրագրողների փոխանակումներին:

Հոդված 8

Կողմերը կաջակցեն իրենց երկրների քաղաքացիներին սույն Համաձայնագրի Պայմանավորվող կողմի տարածքում օտարերկրյա քաղաքացիների գտնվելու հետ կապված հարցերը կարգավորող գործող օրենսդրությանը ծանոթացնելու հարցերում:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի իրականացումը Կողմերը կհանձնարարեն զբոսաշրջության ոլորտը վերահսկող իրավասու պետական լիազոր մարմիններին:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի իրականացմանն առնչվող հարցերը կարգավորելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում Կողմերը յուրաքանչյուր երկրի հավասար թվով լիազոր ներկայացուցիչներից կստեղծեն համատեղ հանձնաժողով: Հանձնաժողովի հանդիպումները հաջորդաբար տեղի կունենան տարեկան մեկ անգամ՝ Երեւանում եւ Աբու Դաբիում: Համատեղ հանձնաժողովը կգործի իր հաստատած կանոնադրության հիման վրա:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման ընթացքում ծագած տարաձայնությունները Կողմերը պետք է լուծեն խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:
Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կձեւակերպվեն առանձին արձանագրությամբ եւ ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածում նշված նորմերի համաձայն:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար երկու երկրների օրենսդրությամբ անհրաժեշտ համապատասխան ներքին ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով Կողմերի՝ միմյանց ծանուցելու օրվանից:
Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա հինգ (5) տարի եւ այնուհետ կերկարաձգվի եւս հինգ (5) տարով, եթե Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին չի ծանուցի այն չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին յուրաքանչյուր ժամանակահատվածի ավարտից առնվազն վեց (6) ամիս առաջ:

Կատարված է Աբու Դաբի քաղաքում, 2007 թվականի դեկտեմբերի 12-ին, երկու հավասարազոր բնօրինակներով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն եւ անգլերեն: Տարաձայնությունների դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2009 թ. հուլիսի 13-ին: